

արձանները: Իսկ Բորդիչի թանգարանին պղնձաձող արձանաց բազմութիւնը՝ որք Հերքուլանոն, Պոմպէա և Սդապէա քաղաքաց պեղմունքէն են, բովանդակ Եւրոպիոյ մէջ գտնուածներէն աւելի է:

Մեծութեան կողմանէ եղած անագապղինձ գործուածոց մէջէն նշանաւորներէն մէկն ալ է՝ վանտոմ հրապարակին կոթողը, որ ձուլեցաւ Ասդէրից պատերազմին թնդանօթից անագապղինձներէն, և կանգնեցաւ ի պատիւ Գաղղիական բանակին. կոթողին բարձրութիւնն է եօթանասուն և հինգ մետր, Նաբոլէոնի արձանին բարձրութիւնն ալ մէկտեղ հաշուելով, իսկ կշիռն է 9,000,000 հազարակրամ:

Անագապղինձէ արձանաց շինութեան համար հարկ է որ բաղադրութիւնը լոյծ ըլլայ, որպէս զի կարենայ դիւրաւ մոնել կաղապարին ամեն մասանցը մէջ, անոր ամեն ձև տալ, և մակերևոյթը միապաղաղ ընել: Կարևոր է դարձեալ ամեն բանէ աւելի որ անագապղինձը սաստիկ կարծր ըլլայ, զի որպէս կարենայ որ և իցէ բախմանց ընդդիմանալ անագապղինձէ գործուածը. հարկաւոր է դարձեալ որ այս բաղադրութիւնը դիւրաւ չխանգարի տեսակ տեսակ բնական պատճառաց ներգործութենէն՝ որոց միշտ ենթակայ է:

Անագապղինձը թնդանօթից շինութեան ալ կը գործածուի: Թնդանօթից անագապղինձին բաղադրութեան համեմատական չափն է հարիւր մասն պղինձ և մետասան մասն անագ. եթէ փոխանակ մետասան մասն անագի՝ գործածուի երկոտասան կամ երեքտասան մասն, բաղադրութիւնը կարծր կ'ըլլայ և դիւրարեկ. իսկ թէ որ նուազ քան դմետասան մասն անագի՝ բաղադրութիւնը սաստիկ կակուղ կ'ըլլայ:

Չանդակաց անագապղինձին բաղադրութիւնն է պղինձ, անագ, զինկ, կապար, երկաթ, պիսմութ և արծաթ, այլ և այլ չափով: Չանդակաց, մանաւանդ մեծ զանգակաց բաղկացութեան մէջ ամենակարևոր համարուած է ար-

ծաթոյ գործածութիւնը, ձայնի պայծառութեան և մաքրութեան համար:

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԻԿՏՈՐ ԼԱՆԿԼՈՒԱՅԻ

Այս տարի մայիսի 14^{էն} զրաւեցաւ ի կենաց երևելի հայագէտ և արևելագէտ անձ մը, Վիկտոր Լանկլուա, որ ծնաւ Գաղղիոյ Տիէպի քաղաքը 1829, մարտ 20, առաջին կայսերութեան քաջ և երևելի սպաներէն միոյն որդի: Բնութեամբ քաղցր և դիւրամատոյց, մտօք զօրաւոր և թափանցող, ձեռներէջ ի մեծամեծս և յաջողութեամբ կատարող, անձ մը որ ամենուն սիրելի և ոչ ումեք թշնամի: Այս ամեն անձնական կատարելութեանց վկայ են անոնք, ոյք կենակից եղած են իրեն հետ, ինչպէս մեր Միաբանութեան անձանցմէ բազումք:

Վիկտոր Լանկլուայի մեծագոյն համբաւը ոչ եթէ աշխարհական գործոց մէջ էր, այլ գրականութեան աստարիզին մէջ, մանաւանդ արևելեան գիտութեանց հմտութեամբը, ուր քան զբազում համադգայինս իւր քաջ հանդիսացաւ, և անուն մեծ թողուց թէ Գաղղիոյ և թէ այն արևելեան ազգաց մէջ, ուր անձամբ պտըտեցաւ և զրեց անոնց վրայ: Ամեն արևելեան կործանեալ և հարստահարեալ ազգաց, և մանաւանդ Հայոց, էր մեծ պաշտպան և ջատագով, ուստի և մեք Հայազգիք առանձինն երախտապարտ պարտականեմք ըլլալ այս մեծահռչակ անձին, որ իբրև ազգասէր Հայ մը, այնպէս Հայոց ազգին բարւոյն վրայ միշտ մտածող և ազգին ներկայն, և առաւել ապագայն լաւցունելու համար ոգւով չափ աշխատող եղած է թէ բանիւք և թէ զրով. ինչպէս որ յայտնի կըրտեսնուի իր գրուածներուն մեծագոյն մասին մէջ, մանաւանդ անոնց որ իր կենաց վերջին տարիներուն մէջ գրուած են:

Համառօտեմք հոս իր գլխաւոր գը-
րուածները, որք են

Դրամագիտութիւն անոռանց Եգիպտոսի
առ տեսչութեամբ հռովմայեց-
ւոց . տպագրեալ մի հատոր 1852.

Դրամագիտութիւն Հայոց 'ի հին ժա-
մանակս, և Դրամագիտութիւն Հա-
յոց 'ի միջին դարոյ (տպ. 1855).

Դրամագիտութիւն Արարացւոց յառաջ-
քան զմահմետականութիւն (տպ.
1859).

Ընդհանուր դրամագիտութիւն Հայոց
աշխարհին (տպ. 1859).

Դրամագիտութիւն Վրաստանի (տպ.
1860).

Ուղեորութիւն 'ի Կիլիկիա և 'ի լերինս
Տաշրուսի (տպ. 1861).

Թուղթ դաշանց քաղաւորաց Կիլիկիոյ
ընդ Եւրոպացիս ¹ (1863).

Լեւառն Արու և վանորայք և որս, որ է
իրբե նախաշաւիղ աշխարհագրու-
թեան Պտղոմէոսի.

Հայք Տաճկաստանի և Կոտորս Տաշ-
րուսի (տպ. 1863).

Ժամանակագրութիւն Միքայէլի ա-
սորոյ ², թարգմանեալ 'ի հայերէնէ
(տպ. 1868):

Կան ուրիշ շատ մանր մունր գրուած-
ներ, որոց մէջ կը յիշատակեմք շնոր-
հապարտ սրտիւ մեք Մխիթարեան միա-
բանքս վենետիոյ մեր վանքին համա-
ռօտագիծ պատմութիւնը ³: Բայց իր
գործոց մէջ ամենէն աւելի յիշատա-
կութեան արժանի կը համարեմք մեր
Հայ ազգին հին և նոր ժամանակի բո-
վանդակ պատմագրաց թարգմանու-
թիւնը զազգիներէն ընդու ահիմք մեծ
հատոր, որոց երկու հատորը, չորրորդ
և հինգերորդ դարու պատմագրաց,
տպեցաւ վերջին այս երկու տարինե-
րու մէջ, և մահը այս կարեւոր գործը
անկատար թողուց, բայց յուսամք թէ

զարձեալ առաջ կ'երթայ: Այս մեծ և
կարեւոր գործոյս նպատակն էր Հայոց
ազգը ծանօթացունել Եւրոպացւոց . և
զի ջունէր այնչափ միջոց դրամական
այս բազմածախ գործը առաջ տանելու
համար, գտաւ ազգասէր և միանգա-
մայն մտօք և ընչիւք հարուստ անձ մը,
որ է Նուպար Իաշայ, պաշտօնեայ ար-
տաքին գործոց Եգիպտոսի, և պարծանք
Հայոց ազգին, որ իր ճոխութեանց փո-
քրագոյն մաս մը նուիրեց այս գործիս
հրատարակմանը, որուն թէպէտ զլուխ
և առաջնորդ եղած էր ինքն վիկտոր
Լանկլուա, այլ ունէր գործակից թարգ-
մանութեանց, թէ մեր միաբանութեան
անձինքներէն, և թէ ուրիշ ազգային և
օտարազգի հայերէնագէտք:

Կ'ափսոսամք այսպիսի անձի մը արա-
գավախճան մահը իր քառասնամեայ
հասակին մէջ. եթէ մահը խնայէր և
երկարէր իր կեանքը, սրչափ ուրիշ
գրաւոր աշխատութեամբ ճոխացունէր
պիտի գրականութիւնը, և որչափ ու-
րիշ ծառայութիւններ պիտի մատու-
ցանէր մեր ազգին:

Պարոն վիկտոր Լանկլուա իր մեծա-
մեծ արդեանց համար կաճառորդ եղած
էր Բեզեքսպուրկի հնախօսութեան կայ-
սերական ակադեմիայի, և արեւելեան
ընկերութեան Մոսքուայի. կաճառորդ
էր արքունի ակադեմիային Գիտու-
թեանց Դուրինի, կաճառորդ էր արեւե-
լեան ընկերութեան Գաղղիոյ, և կաճա-
ռորդ հայկական ակադեմիայ վենետի-
ոյ Սրբոյն Ղազարու: Պատուեալ էր
իտալական պետութենէն իր շքանշա-
նաւ ասպետութեան սրբոյն Մաւրի-
տիոսի և Ղազարու, յունական պետու-
թենէն նշանաւ փրկչին. պատուեալ
էր Ռուսաց տէրութենէն հրամանատա-
րութեան նշանաւ սրբոյն Ստանիսլաւո-
սի, և զարձեալ սրբոյն Աննայի. և Պար-
սից տէրութենէն Առիւծու և Արեգա-
կան նշանաւ:

Արեւելեան ազգաց և մանաւանդ Հա-
յոց ազգին վրայ ունեցած հմտութեանց
պատճառաւ, 1852ին Նաբոլէոն կայսեր
հրամանաւ խրկուեցաւ 'ի Կիլիկիա և 'ի

1 Cartulaire des Chartes d'Arménie.

2 Chronique de Michel le Grand.

3 Notice sur le couvent arménien de l'île
Saint-Lazare à Venise et sur la Congrégation
Mekhitariste.

Պորթն Հայաստան ուսումնական դիտողութիւններ ու քննութիւններ ընելու համար, ուսկից հաւաքեց ու բերաւ 'ի դարձին 80 յունական անտիպ արձանագիրներ, թրծեալ աղիւսէ փոքրիկ արձաններ, և ուրիշ զանազան հնութիւններ, զորս գտաւ հնոյն Տարսոնի աւերակաց մէջ, որք և դրուած են Բարիզու Լուվրի թանգարանին մէջ առանձին ապակափեղկով, և կոչեցեալ յանուն Լանկլուայի: Իր ճանապարհորդութեանց մէջ ըրած դիտողութիւնները չորս հատոր գրուածով հրատարակեց 1854—1861:

Այսպէս համառօտ մը նշանակելով վերջ տամք կենսագրութեան վիկտոր Լանկլուայի գաղղիացւոյ, մարդասէր, գրասէր, արեւելասէր և մանաւանդ հայասէր անձին: Իր մահուամբը Գաղղիան կորոյս իր անթիւ գրաւոր անձինքներէն մին, բայց մեր Հայոց ազգը կորոյս Եւրոպացոյց մէջ իր անունը հըռչակող առաջին հայասէր անձը:

ԽԱՐԹՈՒՄ

Երբոր Սեննար Նուպիոյ մէջ անկախ վարչութեան մը իշխանանիստ քաղաք ըլլալէն դադրեցաւ, սկսաւ շուտով անշքանալ, և անոր տեղ յաջորդելով խարթում՝ առջինը մոռցնել տուաւ: Իր շինուած տեղն առաջ կը կոչուէր Ռաս-է-Խարթում (Գլուխ խարթումի), քաղաքն ալ այս անունը առաւ: Իր դիրքն երկու Նեղոսաց միանալու կէտին վրայ, ֆազոկէլէն և Գորտոֆանէն հաւասար հեռաւորութիւնը, շատ յարմար ըրին իր ընտրութիւնը Եգիպտական Սուլտանի մայրաքաղաք ըլլալու. որով այն երկրին բոլոր վաճառականութեան կեդրոնը և մթերանոցը եղաւ: Երկու Նեղոսներն ալ հարաւային բերքերը հօն կը թափեն, փղի և ձիագետուոյ ժանիք, ռնգեղջիւրի եղջիւրներ, խէժ, ոսկւոյ փոշի, ջայլամի փետուրներ և գերիներ. և մեծն Նեղոս այն երկու գետերէն ձեւանալով՝ այն վա-

ճառքները կ'իջեցնէ 'ի Միջերկրական ծովը, ուսկից փոխարէն Եւրոպայի բերքեր կը դարձունէ, որք են. բահեղներ, բամբակեայ կտաւ, չուխայ, վերմակներ, մետաքսեղէններ, վառօդ, ծխախոտ, որիցէ ցքի, շաքար, բրինձ, գափէ և համեմունք: Յունաստանի գինիներն ալ բաւական քանակութեամբ կը բերուին հօն:...

Թէպէտ և բաց 'ի վերի ըսած նիւթերէն կան նաև ուրիշ զանազան նիւթեր, ինչպէս անասունք, ցորեան, արմաւ, երկրին կտաւը (որ շատ հասարակ է), 'ի վերայ այսր ամենայնի դուրս խաւրուած վաճառուց բոլոր գումարն երեք միլիոնէ աւելի չելլար. դիւրին կ'ըլլար մինչև քսան միլիոն ալ հանել, եթէ քիչ մ'աւելի խնամք տարուեր բերք հասցընելու:

Եգիպտական Սուլտանին ժողովրդեան թիւն է 2 միլիոն, թէ վաչկատուն և թէ հաստատուն. ասոնք երկրագործութեան կը պարապին, անոնք խաշնարածութեան. և երկիրն այնպէս բարեբեր է որ միայն բերքին տաննէրորդ մասն բոլոր բնակչաց պիտոյիցը կը բաւէ: Արօրագրեալ երկիրները տարին ինչուան չորս հունձք կու տան: Մարացորեանը կամ տոշրաւն, Սուլտանի զլխաւոր բերքն է և մէկ աւրտէպը (100 քիլոյ) գրեթէ ֆրանք ու կէս կ'արժէ. որ Գահիրէի մէջ 15 ֆրանք կ'արժէ: Կով մը 12 ֆռանքի կը ծախուի: Բամբակը անմշակ կ'աճի բոլոր Սուլտանի մէջ, բայց անկէ քիչ մաս մը բանի կը բերեն. որ եթէ լաւ մշակուէր, Եւրոպան իր պակասը կրնար լեցընել, և թերևս ալ օր մը այս կողմանէ հիւսիսային Ամերիկայի հարկատու ըլլալէն կը դադրէր: Նոյնն կրնայ ըսուիլ նաև լեղակի և չաքարի եղէգին համար: Լերանց մէջ երկաթի հանքեր կան, որոնք նոյնպէս անխնամ ձգուած են, և շինութեան փայտի տեսակներ իրենց տեղը կը փոտին. որ եթէ Նեղոսը ձգուէին՝ շատ հարկաւոր պիտի ըլլային Եգիպտոսի, որ ստիպուած է Եւրոպայէն տախտակներ բերել տալու: Խարթում իրեն այսչափ